

# ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ



## ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՊՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏՈՒՄ

Ապրիլի 20-ին ԵՊՀ պատմության ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ գիտամշակութային նշանակալից իրադարձություն, որին ներկա էին մեծ թվով ուսանողներ, գիտության ու մշակույթի տարբեր բնագավառի գործիչներ: Միջոցառումը բավականին ընդգրկում էր. նախ ներկաները մասնակցեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Միմոնյանի անձնական գրադարանը ԵՊՀ պատմության ֆակուլտետի Ն. Մառի անվան գրադարան-ընթերցասրահին նվիրելու արարողությանը: Վաստակաշատ գիտնականը այս ձևով իր երախտագիտությունն էր հայտնում սիրելի բուհի պատմության ֆակուլտետին, որն ավարտել է 1952 թ. և որի հայոց պատմության ամբիոնի վարիչն է եղել 1999-2003 թթ.: Շուրջ 1000 կտոր արժեքավոր գրքերը դարձան ուսանողների և պատմաբանների սեփականությունը: Նվիրատվության մեջ մեծ քանակ են կազմում հազվագյուտ հրատարակության գրքեր, պարբերականներ, արխիվային փաստաթղթեր: Դրանց թվում են նաև Հր. Միմոնյանի հեղինակած բոլոր աշխատությունները՝ հրատարակված անվանի պատմաբանի կողմից գիտական բեղուն գործունեության ավելի քան 50 տարիների ընթացքում:

Այնուհետև պատմության ֆակուլտետի մեծ դահլիճում տեղի ունեցավ մեծամուն հայագետ, ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլի-

կիայում (1909 թ. ապրիլ)» գրքի շնորհանդեսը և հեղինակի 80-ամյա տարեդարձին նվիրված մեծարման արարողությունը:

Բացման խոսքով հանդես եկավ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը: Բանախոսը շնորհավորեց անվանի գիտնականին ծննդյան 80-ամյակի առթիվ՝ մաղթելով քաջառողջություն ու բեղուն ստեղծագործական աշխատանք: Նա հակիրճ ներկայացրեց գիտնականի կյանքը և գործունեությունը: Շնորհակալությամբ նշեց, որ մեծարգո հոբելյարի նվիրած գրադարանը կծառայի երիտասարդ սերունդի հայեցի դաստիարակմանը և մատչելի կլինի պատմության հարցերով զբաղվող բոլոր մասնագետների համար:

Ողջույնի խոսքով հանդես եկան ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, Հրանտ Ղազարյանը և ուրիշներ: Ելույթ ունեցողները բարձր գնահատեցին Հր. Միմոնյան գիտնականի և քաղաքացու վաստակը, հայ ժողովրդին մատուցած ծառայությունները:

Կրթության ու գիտության ոլորտում ներդրած մեծ ավանդի համար և ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Հրաչիկ Միմոնյանը պարգևատրվեց ՀՀ ԿԳՆ բարձրագույն

պարզևով՝ ոսկե հուշամեդալով, որը նրան հանձնեց կրթության և գիտության նախարար Սպարտակ Մեյրանյանը: Նա իր ելույթում մեծապես կարևորեց Հր. Միմոնյանի վաստակը և նշեց, որ վաղուց ժամանակն է հայագիտությունը դարձնել քաղաքական նշանակություն ունեցող կատեգորիա:

Հանդիսության հաջորդ մասում, որ մվիրված էր Կիլիկիայի հայերի կոտորածների 100-ամյակին, լսվեցին Հր. Միմոնյանի նշված աշխատության մեջ լուսաբանված տարբեր հարցերի մասին զեկուցումներ:

«Կիլիկիայի կոտորածների պատճառներն ու պատմական դասերը (ըստ Հր. Միմոնյանի աշխատության)» թեմայով զեկուցեց պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանը: Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ 1894-96 թթ. սկսված և մինչև 1923 թվականը տևած կոտորածները մեկ միասնական շղթա են, որի անքակտելի օղակներից մեկն են Կիլիկիայի հայության ջարդերը: Յուրաքանչյուր օղակ կարևոր է այնքան, որքան մյուսը՝ անկախ գոհերի թվից և հետևանքների չափից: Որքան հեռանում ենք այդ ժամանակներից, այնքան կարևոր է դառնում գործված ոճիրը գիտական բարձր մակարդակով լուսաբանելու, հանրության դատին ներկայացնելու և պատմական դասեր քաղելու պահանջը: Այս տեսակետից Կիլիկիայի 1909 թ. ապրիլյան ջարդերի և դրանց առնչվող պատմաքաղաքական իրադարձությունների վերհանումը և դրանց պատճառների բացահայտումը գիտատեսական բարձր մակարդակով իրականացվել է վաստակաշատ գիտնական Հր. Միմոնյանի տքնազան աշխատանքի արդյունք այս մեծարժեք մենագրության մեջ: Գիրքը շահեկանորեն առանձնանում է պրոֆեսիոնալ մոտեցմամբ և գիտա-

կան փաստերը մանրակրկիտ վերլուծելու բարեխղճությամբ:

Հր. Միմոնյանի աշխատության հանգամանալից քննություն էր պ.գ.դ. Էմմա Կոստանդյանի «100 տարի առաջ կամ ինչ դասեր քաղել պատմությունից» զեկուցումը: Գիտնականը նախ բարձր գնահատեց հեղինակի օգտագործած աղբյուրների հարուստությունը: ՀՀ ազգային արխիվի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տարբեր ֆոնդերի բազմաթիվ արժեքավոր վավերագրերը, ականատեսների հուշագրական պատումները, աշխարհի տարբեր ծագերում լույս տեսած՝ թեմային առնչվող աշխատասիրությունները, վկայությունները, տեղեկագրերը, պարբերականները քննախույզ վերլուծությամբ և համադրությամբ ներկայացված են գրքում, որը գրականն է բարձրարժեք գիտական աշխատության: Գիրքը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, արժեքավոր հավելվածներից, անձնանունների, տեղանունների, օգտագործած աղբյուրների և գրականության ցանկերից, որոնք լավագույն վկայությունն են հեղինակի գիտական բարձր պատասխանատվության ու բարեխղճության: Ներածության մեջ, նշեց զեկուցողը, գիտնականը ոչ միայն քննում է աշխատության աղբյուրագիտական հենքը, այլև հակիրճ ներկայացնում Կիլիկիայի անցյալը, ժողովրդագրական կազմը, թվաքանակը, վարչական բաժանումը, վերհանում կոտորածների պատճառները, ջարդի առիթները և գործադրված սադրանքները: Այնուհետև զեկուցողը առանձին անդրադարձավ գրքի չորս գլուխներին, ուր հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տվել, որ Ադանայի հայության կոտորածը պատահական չէր, այլ լավ մշակված ծրագիր: Մանրախույզ քննությամբ աշխատության

հեղինակը բացահայտում է մեծ տերությունների հյուպատոսների՝ սկըզբում լիովին անտարբեր, սպա ցուցադրական «օգնությունը» Կարմիր խաչի միջոցով: Փաստաթղթերի օգնությամբ հեղինակն ապացուցում է, որ հայ բնակչության պաշտպանության նպատակով օսմանյան մայրաքաղաքից Կիլիկիա ուղարկված բանակի վաշտերը, որոնց հայերն ընդունեցին խանդավառությամբ, անմիջապես լծվեցին հայերի ձեռքում եղած սակավաթիվ զենքը հավաքելուն, որից հետո նրանք նախապատրաստեցին ջարդն ավարտին հասցնելու գործը:

Աշխատության երեք գլուխներում, նշեց զեկուցողը, քննարկված են հայկական Կիլիկիայի բոլոր վայրերի կոտորածները: Հատուկ ուշադրության է արժանի հատկապես մեկ փաստ. երկու վիլայեթների, հինգ սանջակների բոլոր բնակավայրերից կոտորածներից զերծ մնաց միայն անպարտ Ձեյթունը՝ շրջակա 12 հայաբնակ գյուղերով: 1895-96 թթ. Ձեյթունի ապստամբությունից դասեր քաղած թուրքերը չհամարձակվեցին մոտենալ նույնիսկ նրա մատույցներին:

Չորրորդ գլուխը ամենաձավալունն է, համարյա գրքի կեսը: Այստեղ քննարկված են աղետյալներին օգնություն ցուցաբերելու խնդիրները՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի, նպաստամատույց հանձնաժողովի, Կարմիր խաչի առողջապահական խմբի, Ազգային ժողովի՝ այդ ուղղությամբ ծավալած գործունեությունը: Հատուկ քննության առարկա է դարձել զոհերի թիվը պարզելու հարցը: Բարձր դուռը հանրությանը կեղծ փաստեր էր հաղորդում իսլամ և հայ սպանվածների թվի վերաբերյալ: Համադրելով բոլոր փաստերը՝ հեղինակն անառարկելիորեն ապացուցում է, որ

զոհվածների ընդհանուր թիվը հասել է մոտ 40 հազարի:

Հետաքրքիր վերլուծություն է կատարված «Ուլքեր էին կազմակերպել կոտորածները» ենթագլխում: Այդ դեպքերը տեղի ունեցան այն օրերին, երբ Կ. Պոլսում ծավալվել էր սուլթան Աբդուլ Համիդի կողմնակիցների զինված ապստամբությունը: Այս հանրակնունդը շատերին դրդում է մտածելու, որ ջարդերն իրականացվել են վերջինիս հրամանով: Նման կարծիքի էր նաև երիտթուրքերի հետ համագործակցող դաշնակցությունը: Միայն երկու տարի հետո ՀՅԳ-ն ընդունեց, որ սխալվել է: Աշխատության հեղինակը անառարկելի փաստերով ապացուցում է, որ կոտորածների կազմակերպիչները «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարներն էին:

Գրքում մեծ հմտությամբ ներկայացված են թուրքական պառլամենտում կիլիկյան աղետի բուռն քննարկումները, որտեղ թուրք պատգամավորները փորձում էին կոտորածների մեղքը բարդել հայ ֆիդայիների վրա: Նրանց ձայնակցում էին քուրդ պատգամավորները:

Չորրորդ գլխի կարևորագույն ենթագլուխներից է «Մարդասիրությունն ընդդեմ մարդատյացության» բաժինը, որտեղ հեղինակը բարեխիղճ պրպտումներով հայտնաբերել, անուն առ անուն հիշատակել և իր երախտիքի խոսքն է ուղղել իրենց կյանքը վտանգի ենթարկելով հայերին օգնած ամերիկացի ու ֆրանսիացի միսիոներներին, հիսուսյան և ֆրանցիսկյան հայրերին, զերմանացի գործարանատերերին: Հեղինակը միևնույն ժամանակ ընդգծում է մեծ տերությունների պաշտոնական վարքագիծը այդ եղկելի իրադարձությունների նկատմամբ: Երիտթուրքական կառավարության հետ իրենց հարաբերությունները չփչացնելու համար նրանք այդ ի-

րադարձությունների անտարբեր ականատեսը եղան:

Վերջում զեկուցողը հարկ համարեց ունկնդիրների ուշադրությունը հրավիրել այդ բարձրաժեք աշխատության խիստ սեղմ (ընդամենը երկու էջ), բայց բովանդակությամբ արտակարգ տարողունակ վերջաբանի վրա՝ առանձնացնելով երկու դրույթ:

1. Նշելով, որ 1909 թ. Կիլիկիայի աղետը ողջ հայության ողբերգական էջերից մեկն է, Հր. Միմոնյանը պատգամում է՝ **մեր ժողովուրդն ամեն թույլ է պատրաստ լինի դիմակայելու հազարամյակի նոր մարտահրավերներին:**

2. Ընդգծելով, որ **եթե հայությունն ունենար իր ազգային պետականությունը, ապա չէր ենթարկվի կոտորածների, ջարդերի, ցեղասպանության, ուստի հայ ժողովուրդը պետք է աչքի լույսի պես պահպանի դժվարին երկունքով ծնված Հայաստանի Հանրապետությունը:**

Այնուհետև «Մեկ վկայություն պատմական իրականության մասին» զեկուցումով հանդես եկավ պ.գ.թ. Ալիկ Ղարիբյանը, որն ունկնդիրների ուշադրությունը հրավիրեց գրքի երեք հավելվածներում բերված նյութերի վրա: Դրանք օտարերկրյա հայտնի պարբերականներում հայերի կոտորածների մասին հաղորդագրություններն են, հազվագյուտ լուսանկարները, այլ փաստաթղթեր, որոնք անվերապահորեն վկայում են կոտորածի ենթարկված հայերի թվաքանակի, մոլեռանդ մահմեդականների դաժանությունների, մեծ տերությունների անտարբերության, ինչպես նաև մի շարք միսիոներների ու օտարերկրյա քաղաքացիների ցուցաբերած օգնության մասին:

Պ.գ.թ. Ժակ Մանուկյանի զեկուցումը վերնագրված էր «Կիլիկիահայտության կոտորածները որպես երիտթուրքերի կողմից իրականացված հայոց ցեղասպանության սկիզբ»:

Ջեկուցողը հիմնականում ուշադրություն դարձրեց Հր. Միմոնյանի աշխատության այն դրվագներին, որտեղ հիմնավորվում է, որ Կիլիկիայում իրականացված հայոց ջարդերը կանխամտածված ու լավ նախապատրաստված էին: Ի հաստատումն ասվածի՝ նա բերում է մի քանի փաստ: Մասնավորապես՝ ջարդերից առաջ Կիլիկիայի ափերից հեռացվեցին անգլիական, ֆրանսիական, ռուսական, իտալական զրահանավերը, որոնք որոշ չափով զսպող գործոն էին թուրքերի համար: Ազանայի ջարդերին մասնակցել են ոչ միայն թուրք ու քուրդ խուժանը, այլև երիտթուրքական հրամանատարությանը ենթակա երկու կանոնավոր զորագունդ: Կոտորածներից հետո երիտթուրքերը հոգ էին տարել, որ տեղեկատվության արտահոսք չլինի Եվրոպա կամ Ամերիկա, և հասարակությունը չիմանա ճշմարտությունը...

Հատկանշական է, որ երիտթուրքերին չհաջողվեց Կիլիկիան լիովին հայաթափել ո՛չ 1909 թ., ո՛չ էլ 1915-18 թթ. ցեղասպանության ընթացքում: Այնուհանդերձ, հայաթափման ծրագիրը ավարտին հասցվեց 1922-23 թթ. Մուստաֆա Բենալի օրոք:

Գիտաժողովը ոչ միայն նշանակալից իրադարձություն էր անվանի գիտնական Հրաչիկ Միմոնյանի գործունեության գնահատության առումով, այլև ասես «բաց» դաս էր ներկա մեծաթիվ ուսանողների համար:

*Լ. Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ*